ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՑՈՒ «ՎԵՑԱՒՐԵԱՆ»

Կ. Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Բարսեղ Կեսարացու (329—379) մատենագրական հարուստ ժառանգության մեջ իր ընդգրկած հարցերի բազմազանությամբ ու խորությամբ բացառիկ արժեք ունի «Ճառք վասն վեցաւրեայ արարչութեանն» կամ, ինչպես ընդունված է դիտական գրականության մեջ՝ «Վեցաւրեայ» երկասիրությունը[1]։

Հայտնի են բազմաթիվ վեցօրյաներ՝ գրված ս. Գրքի համապատասխան առասպելի հիմքի վրա կամ նմանությամբ[2]։ *Սակայն կարևորն այն է, որ աստվածաշնչյան միևնույն թեման տարբեր ժամանակներում քննության առարկա է դարձել այլևայլ նկատառումներով։ Բարսեղ Կեսարացին խոսում է շրջապատող աշխարհի, դոյի, բնության ամենաբազմազան առարկաների, երևույթների, բուսա-կենդանական աշխարհի լինելիության, տիեզերական մարմինների հարատև փոփոխությունների, մարդկային փոխհարաբերությունների, կենցաղի, սովորույթների և անդամ կյանքի ու մահվան առեղծվածի հետ կապված այլևայլ հարցերի մասին՝ ճշմարտացիությունը սկզբունք ընդունելով. «Բայց մեք զպաճուճազարդ զճշմարտութիւնսն՝ որ ստեղծան ի մտաց՝ արհամարհեսցուք և այպանեսցուք, յորս ոչ դտանի ամենևին զօրութիւն ճշմարտութեանն»*[3]։

Ուշագրավ է այն իրողությունը, որ Բարսեղ Կեսարացին բնության ամենաբազմազան առարկաների ու երևույթների հարատև փոփոխման, իր արտահայտությամբ՝ կերպարանափոխ լինելու երևույթը դիտում է ժամանակի ու տարածության փիլիսոփայական ըմբռնման շրջանակներում։ Նման բնույթի մի բացատրությունից հետո նա ավելացնում է. «Արդ այսպէս բնութիւն իրաց՝ որ լինին ի ժամանակս. զի մինչ դեռ ի յառաջադէմ ընթանան՝ աճին և զարգանան, և իբրև դադարեն յաճմանէն՝ պակասեալ սպառին։ Զի ինչ որ սկսանի և վարի ժամանակօք, լինել հաստատուն անշարժ և կալ մնալ առանց փոխման ոչ կարէ»[4]։

«Վեցաւրեայ» ճառերում արծարծվում են հարցեր, որոնց Բարսեղ Կեսարացու նախորդ և ժամանակակից գիտնականներից շատերը տվել են ոչ ճիշտ պատասխաններ։ Կեսարացին նույնիսկ վկայակոչում է փիլիսոփայական ուղղություններ (օրինակ՝ «փւսիկեանք»), որոնց հավասարապես հետաքրքրել է Երկրի առաջացման, շարժվելու, անշարժության, ջրի, օդի, սյուների վրա հենվելու ժամանակի առասպելախառը պնդումները և այլն։

---

1 *Սրբոյ Բարսղի եպիսկոպոսի Կեսարու Կապադովկացւոց Ճառք վասն վեցօրեայ արարչութեանն, Վենետիկ, 1830։ Այսուհետև՝ «Վեցաւրեայ»։*

2 *Ամբողջական ցանկը տե՛ս* «История русской литературы», т. I, М., *1941, էջ 199—200։*

3 *«Վեցաւրեայ», էջ 47։*

4 *Նույն տեղում, էջ 10։*

Տրված պատասխան-լուծումներից և ոչ մեկում չգտնելով առաջադրված հարցերի համոզիչ բացատրությունները, նա տալիս է հետևյալ գիտա-փիլիսոփայական միանգամայն ճիշտ մեկնությունը. «Եւ ամենայն ինչ, որ ունի ծանրութիւն, ծանրութիւն իւր ձգիչ նորուն է ի խոնարհն, եթէ քար և եթէ փայտ և ամենայն ինչ, որ նմանութիւն երկրի ունի, առ երկիր ձգի իջանել. այսպիսի ծանրութիւն ունի երկիր, և սոքիմք հաստատեալ կայ»[5]։ Սխալ կլիներ կարծել, թե այսօր էլ ճիշտ համարվող այս և շատ այլ գիտական բացատրությունների առաջին հեղինակը Բարսեղ Կեսարացին է, թեև «Վեցաւրեայ» ճառերում նա անընդհատ բանավիճում է բնափիլիսոփայության հարցերով զբաղվող զանազան ուղղությունների հետևությունների դեմ։

Չարի և բարու փիլիսոփայական խնդիրը շատ է զբաղեցրել հին հունական փիլիսոփա-մտածողներին։ Բարսեղ Կեսարացին նույնպես անդրադարձել է տվյալ հարցին և որոշակիորեն հակադրվում է խնդրի շուրջ իշխող սխալ մտայնությանը։ Հիմնավոր է նրա հարցադրումը. եթե չարիքը ոչ աստվածային է և ոչ էլ ինքնակա, ինչպես կարծում են շատերը, ապա «ուստի՞ եղև»։ Բարսեղ Կեսարացին մերժում է այն միտքը, թե «կենդանի է չարն բնութեամբ»։ Եվ դա բացատրում է հետևյալ կերպ. «Եւ մեք մի կարծեսցուք՝ եթէ արտաքոյ կամաց մերոց իցեն չարիքն, և մի վրիպեսցուք՝ եթէ յառաջագոյն լեալ իցէ։ Քանզի իւրաքանչիւր ոք ի մէնջ գիտէ, թէ չարութիւն իւրոց կամացն է, և կարծիք մեղացն, զոր ածէ մարդ զմտաւ, են հակառակորդ բարեաց, որ լինին ի ծուլութենէ ողոցն, որ ախորժեն զչարիս»[6]։

Չորրորդ դարում, երբ որոշ փիլիսոփայական ուղղություններ անվերապահ էին համարում չարի ու բարու աստվածային ծագումը, Բարսեղ Կեսարացին փաստորեն առաջադրում է երկու էական հարց. ա) չարիքը աստվածային չէ, և բացառված է նրա գոյությունը մարդկային բնությունից անկախ. բ) մարդը չարիք է գործում «ի ծուլութենէ»։ Ըստ Բարսեղ Կեսարացու, մարդկային բնությամբ պետք է բացատրել ծերությունը, հիվանդությունը, տրտմությունը, ուրախությունը և ոչ թե չարի կամ բարու ինքնակա գոյությամբ։

Չարիքի կամային պայմանավորվածությունը ունկնդրի համար անկասկած դարձնելու նպատակով նա դիմում է առօրյա կյանքում կիրառվող իրավաբանական համոզիչ եղանների։ Եթե չարիքը մարդկային կամքից անկախ է, պատճառաբանում է նա, ապա ավելորդ են բազմաթիվ օրենքները, որոնք կոչված են սահմանազատելու թույլատրելին անթույլատրելիից, ավելորդ են դատավորները, որոնք խրախուսում են բարեգործությունը և արդար դատաստանով պատժում չարագործներին։ Բարսեղ Կեսարացին վկայակոչում է գողության պատճառած վնասների, հնարավոր հետևանքների, նույն հողի վրա կատարվող սպանության ու տարբեր սոցիալական խավերի ունեցած պատկերացումները և անում միանգամայն ճիշտ եզրահանգում. եթե չլիներ հանցագործության, չարիքի համար սահմանված պատիժը, ապա հանցանք գործած անձը կարող էր արդարանալ. «...քանզի ոչ մերովք կամօք լինէին»[7]։ Կեսարացու այս օրինակ փաստարկները, հարկավ, անառարկելի են դարձնում իր վերոհիշյալ թեզը և միաժամանակ կարևոր հաղորդումներ են ժամանակի պետության ու իրավունքի որոշ առանձնահատուկ կողմեր գնահատելու իմաստով։

5 Նույն տեղում, էջ 19։
6 Նույն տեղում, էջ 32։
7 Նույն տեղում, էջ 123։

Բարսեղ Կեսարացին, որ հոգևոր լիարժեք դաստիարակություն էր ստացել և «Վեցաւրեան» հորինելիս էլ Կեսարիայի թեմի արքեպիսկոպոսն էր, որքան էլ զարմանալի է, քննվող ճառերում երբեմն ընդդիմանում է բնության այս կամ այն երևույթին հույն իմաստունների տված հոգևոր մեկնություններին։ Եվ դա ոչ այնքան հոգևոր մեկնության համար, որքան հանրահայտ բնական երևույթը նենդափոխելու դեմ, թերևս, դարձյալ արարչի անաղարտության պաշտամունքից դրդված։ Այսպես, օրինակ, քննադատելով այն միտքը, թե վերև բարձրացող (գոլորշիացող) ջրերը «հոգևորք են», իսկ ներքևում, երկրային կյանքում մնացածները՝ «ժանտք և գարշելիք», Բարսեղ Կեսարացին գրում է. «Այլ մեք զջուրս՝ ջուրս ասեմք, և այնպէս գիտեմք զնոսա՝ որպէս իւրեանց բնութիւն իսկ պահանջէ, և որպէս մեկնեացն կալ ի վերոյ և ի ներքոյ, նոյնպէս և իմասցուք զնոսա»[8]։ Ինքնին ուշագրավ է այն փաստը, որ նա շրջապատող աշխարհի առարկաների էությունը փորձում է բնությամբ բացատրել. ջրին ասել ջուր, ասենք, ծառին՝ ծառ, պտղին՝ պտուղ և այլն։

Երբ ճշգրիտ գիտությունների զարգացման մակարդակը հնարավորություն չէր ընձեռում IV դարում տալու բնական բազմաթիվ երևույթների գիտական բացատրությունը, Բարսեղ Կեսարացին վերապատմում է երկնային մարմինների (Արև, Լուսին, աստղեր) հետ կատարվող փոփոխությամբ եղանակը գուշակելու ժամանակի պատկերացումները՝ դարձյալ որպես ամենաստեղծ տիրոջ պատվիրան։ Այսպես, օրինակ, արևմուտքում ամպի առկայությունը անձրևի նշան է ընկալվել, երկնքի երեկոյան կարմիր ամպածածկույթը՝ պարզ եղանակի, առավոտյան ամպաշղարշը՝ անձրևի և այլն. «Եւ յորժամ շուրջ բակ ունիցի լուսինն ամպոց, և ունիցի մռայլ զարեգակն ամպոց, ջուրք բազումք յօդոց յերկիր առաքին կամ զարամուր փքոց և զդառնաշունչ բքոց ամբոխելոց յայտառնեն»[9]։

Լուսնի «աճիլն և ի մաշիլն», ըստ Բարսեղ Կեսարացու և ժամանակի աշխարհայեցողության, նույնպես պայմանավորում է եղանակի սպասվող փոփոխությունը։ Լուսնի երեքօրյա պարզությունը նա համարում է վճիտ եղանակի նախանշան, իսկ «...յորժամ ի մահիկ եղջերսն զնշանակ կարմրութեան կամ զմթարութիւն ունիցի՝ մթութիւն, ջուրք բազումք յամպոց յերկիր առաքին, և հարաւ յորդաշունչ բռնութեամբ յօդս բարբառի»[10]։

Բուսա-կենդանական աշխարհի բիոլոգիական զարգացման համար Արևի ջերմության բացառիկ կարևորությունը ընդունելով հանդերձ, նա հարցը սպառված չի համարում և, շարունակելով պրպտումները, նույնանման հատկանիշ է վերագրում նաև Լուսնին։ Բարսեղ Կեսարացին համոզիչ պատճառաբանությամբ ցույց է տալիս, որ Լուսնի կրած ֆիզիկական բարդ փոփոխությունները անպայմանորեն իրենց դրական ազդեցությունն են թողնում բուսա-կենդանական աշխարհի զարգացման վրա. «Ի փոփոխմունսն, որ լինին ի լուսնի անասունք զլրութիւն առնուն, և տունկք օգնականութիւն գտանեն աճման սրընդեան իւրեանց. քանզի ի մաշիլն այլազգի գտանին և ընդ աճիլն այլազգ փոփոխին...»[11]։ Լուսնի՝ բնության վրա ազդելու, բիոլոգիական փոփոխություններ հարկադրելու հատկանիշը պայմանավորված է նրա ունեցած ջերմությամբ.

8 Նույն տեղում, էջ 63։
9 Նույն տեղում, էջ 115։
10 Նույն տեղում։
11 Նույն տեղում, էջ 132։

և խոնավությամբ, ինչպես Արևինը, «Քանզի լուսինն ի ջերմութենէ և ի խոնաւութենէ ունի խառնուած...»[12]։

Բարսեղ Կեսարացու այս բնույթի բացատրությունները բնության երևույթներին տված անհրաժեշտ ու ժամանակի համար միակ հնարավոր մեկնությունները չլինելով հանդերձ՝ ունեին ավելի առօրյա ու գործնական նպատակ։ Դրանց իմացությունը անհրաժեշտ էր, որպեսզի նավավարը չխարխափեր ծովի անհունում, ճանապարհորդը անպատեհ եղանակին ճամփա չընկներ «...և մշակն զգուշասցի՝ յառաջագոյն սերմանել զսերմանիսն և տնկել զտունկս ի պատշաճ ժամանակի»[13]։

«Վեցաւրեայ» ճառերում, թեև ոչ ընդարձակ, բայց բացառիկ կարևոր տեղեկություններ են պահպանվել ժամանակի հասարակության բարքերի, սովորույթների, աշխարհիկ նախասիրությունների ու բարոյական ըմբռնումների մասին, մի բան, որի շուրջ տակավին քիչ բան է հայտնի մեր հարուստ մատենագրությունից։ «Ազգի ազգի տեսիլք մոլեգինք լինին ի քաղաքս բազումս,— գրում է Բարսեղ Կեսարացին,— և յայգուէ մինչև ցերեկոյ միտ եդեալ պշուցեալ հային իբրև ի դարման իմն և ի կերակուր աչաց ցանկութեամբք բնակիչք նոցա, և լսել անդադար զձայնս աղտեղի երգոց՝ որ լնուն արկանեն ի լսելիս նոցա զյիշատակս բազմաց աղտեղութեանց, որ մտանեն բռնեն յըշտեմարանս սրտից և մտաց. և այնպէս անյագ են լսել զլուրն վնասակար»[14]։ Կեսարացին այս և նման բնույթի հաղորդումները անում է սոսկ քննադատության, դատափետանքի առումով, և դա հասկանալի է։ Սակայն կարևորն այն է, որ նրա այս կարգի դիտողություններում միշտ էլ առկա է ժամանակի աշխարհիկ մտածողության ինչ-որ կողմ։ Վկայակոչված հատվածով աներկբա է դառնում այն փաստը, որ ա) IV դարի Արևելքում կային քաղաքներ, որոնցում առավոտից ուշ երեկո հնչում էր երգն ու երաժշտությունը. ժամանակակցի «աղտեղի երգոց» բնորոշումը միայն աշխարհիկ երգին կարող էր վերաբերվել, բ) ամբոխը սրտի և մտքի անհագ լարումով է ունկնդրում այդ երգը։

Բարսեղ Կեսարացու մեկ այլ վկայությամբ որոշակի են դառնում սոցիալական այն խավերը, որոնք պատրաստ էին, ընդհուպ զոհողությամբ, ունկնդրել այդ երգը. «Եվ կէսքն զշահ ևս վաճառացն, զոր ժողովեն միշտ ի հրապարակաց, թողուն և երթան անդր դատարկանան, և կէսքն՝ զգործ արուեստից, որ գտանեն զդարման կենաց իւրեանց»[15]։ Այստեղ խոսքը, հարկավ, վերաբերում է վաճառաշահ և արհեստավոր այն խավերին, որոնք, համեմատաբար ապահով նյութական միջոցներ ունենալով, ժամանակ էին հատկացնում հանգստի, առավելապես գուսանական երաժշտության ունկնդրման համար։

Ժամանակին գոյություն ունեցող հասարակական փոխհարաբերության ուսումնասիրման ու աշխարհիկ երգի հարկի և տարածվածության գնահատման առումով կարևոր է Բարսեղ Կեսարացու մեկ այլ հաղորդում. «Եւ այլք՝ որ ոչ էին անդր մօտ, երանի ևս տան բազմամբոխ ժողովոցն՝ որ երթեալ կցորդեալ կոպնեալ կան առ վնասակարսն»[16]։ Կեսարացին այս հատվածում թերևս նկա-

12 Նույն տեղում։
13 Նույն տեղում, էջ 116։
14 Նույն տեղում, էջ 66։
15 Նույն տեղում։
16 Նույն տեղում։

տի ունի անինչք, անապահով մարդկանց, որոնք, այդ երդը սիրելով հանդերձ, հնարավորություն չունեին մոտիկից ունկնդրելու։

Բարսեղ Կեսարացին հոգևոր գործչի անհանգստությամբ որքան էլ ջանում է հավատացնել, թե «...գուսանութիւնն իւրովք պատիր արուեստիւք զապականութեան նշանակ գործէ ի տեսողս իւր...»[17], այդուամենայնիվ, երբեմն ինքն էլ է տարվում երդ ու երաժշտությամբ, առավել ևս նկարեն պարով։

Նա շրջապատող իրականության մասին արած իր դատողությունները, դիտական մեկնությունները, բուսա-կենդանական աշխարհի զարգացման ներքին պատճառաբանվածության բացահայտումը և երբեմն էլ որևէ խնդրի շուրջ արած սխալ եզրահանգումներն անդամ փորձում է մատուցել որպես տիրող խոսք և մտածողություն՝ ինքը ջանալով հանդես գալ պարզապես վերջինս ունկընդրին հասցնող միջնորդ օղակի դերում։ Եվ դա հասկանալի է. «Վեցաւրեայ» ճառերը սկզբնապես քրիստոնեության տարածումը խթանելու, ուղիղ հավատի երկրպագուների թիվը ստվարացնելու գործնական նպատակ են ունեցել։ Կեսարացու հիշյալ ճառերի հորինման ժամանակ պաշտոնական քրիստոնեությունը ընդամենը 60—70 տարվա պատմություն ուներ, ուստի և վերջինիս հաստատման ու վերջնական հաղթանակի համար հոգևոր գործչին պետք էին շրջապատող իրականությունից վերցված ճշմարիտ փաստարկներ։ Ահա թե ինչու Բարսեղ Կեսարացին բնության առարկաների փիլիսոփայական էությանն անծանոթ ու քրիստոնեա-եկեղեցական խնդիրներին ոչ լավատեղյակ, թերևս անհաղորդ, մասսաներին եկեղեցու հարկի տակ հատված առ հատված կարդում էր «Վեցաւրեայ» ճառերը, ունկնդիրների համար պարզաբանելով անբացատրելի համարվող բնության գաղտնիքները՝ աշխարհստեղծման ու գոյի իր իսկ պատկերացումները, որոնց, առավել քան ունկնդիրները, հավատում էր Բարսեղ Կեսարացին։

Հնարավո՞ր է, արդյոք, մոտավոր պատկերացում կազմել սոցիալական այն խավի մասին, որը օրերով ունկնդրում էր Բարսեղ Կեսարացուն։ Այս իմաստով կարևոր է Կեսարացու մի դիտողությունը։ Խոսելով Լուսնի կրած փոփոխությունների մասին, նա գրում է. «...չկայ ինչ հարկ ի վերայ մուծանել ի խորին պատմութիւնսն զլսելիս ռամիկ մարդկան, զի մի անդր մտանելովն անագանել գտանիցիմք ի ճառիս, զոր արկեալ էաք»[18]։ Բերված հատվածի ընդգծված միտքը ցույց է տալիս, որ «Վեցաւրեայ» ճառերի ունկնդիրները հիմնականում եղել են «ռամիկ մարդիկ»։ Անշուշտ, կային նաև այլ խավի ներկայացուցիչներ։ Քարոզվող աստվածապաշտությունն իր հերթին լավագույն հոգևոր սնունդ էր ջերմեռանդ քրիստոնյաների համար, ուստի Բարսեղ Կեսարացին իրեն վարձատրված է համարում «Վեցաւրեայ» ճառերը ասելու հնարավորությամբ, առավել ևս այն գիտակցությամբ, որ նրանք ունկնդիրների համար հոգևոր կերակուր են հանդիսանում. «Եւ ես գոհանամ զայնմանէ՝ որ ետ ինձ զմատակարարութիւն սակաւ բանիցս, որ եղև բաւական լսելեաց ձերոց. զի նոյն դարձեալ իւրովք մեծամեծովքն լցուսցէ զձեզ հոգևոր կերակրովն»[19],— գրում է նա։

Աշխարհստեղծումը, ինչպես նկատել ենք, Բարսեղ Կեսարացին կապում է միակ արարչի՝ աստծո հետ, ուստի և շրջապատող բնության իրերի ու երևույթ-

17 Նույն տեղում։
18 Նույն տեղում, էջ 114։
19 Նույն տեղում, էջ 136, հմմտ. էջ 200—201։

ների մեջ որքան զարմանահրաշ հատկանիշներ հայտնաբերվեն, ունկնդիրների համար այնքան հավատընծայելի ու զարմանահրաշ կլինի աստված։ Այս սկզբունքով առաջնորդվելով, «Վեցաւրեայ» ճառերի գլխավոր նպատակը՝ բնության գաղտնիքների բացահայտմամբ քրիստոնեական հավատի ամրապնդումը, թվում է, հարակից խնդիր է դառնում, քննության առարկա թողնելով բնությունը։ Դա, թերևս, հետևանք է այն բանի, որ Բարսեղ Կեսարացին, կրոնական գործնական որոշակի նպատակ հետապնդելով հանդերձ, շատ հաճախ ավելի հեռուն է գնում և մոռանում իր բուն առարկան։ Եվ որոշ ժամանակ հետո, սթափվելով ինքնամոռացումից, հիշում է գլխավոր նպատակը և առանց հապաղելու կրկնում աստծո «Եւ եղիցին»։

Աստվածասիրություն քարոզելու Բարսեղ Կեսարացու նախընտրած միջոցը IV դարի եկեղեցական հարատև վեճերի պայմաններում արդարանում էր առավելապես հետևյալ երկու նկատառումով. ա) դա հնարավորություն էր ընձեռում անմիջականորեն չառնչվել քրիստոնեության հաստատման ժամանակաշրջանին հատուկ դավանաբանական վեճերին, բ) քրիստոնեական վարդապետության նկատմամբ հստակ կողմնորոշում չունեցող մեծաթիվ ունկնդիրներ, բնության մասին զրույցներ լսելով, ուղիղ հավատի երկրպագուներ էին դառնում։

Բարսեղ Կեսարացին կատարյալ պատկերացում ունի շրջապատող կենդանական աշխարհի բիոլոգիական ամենանուրբ առանձնահատկությունների մասին։ Նա կենդանիների ֆիզիկական տվյալների ներդաշնակությունը բացատրում է կենսապահպանման գործոններով։ Ուղտը երկար պարանոց ունի, որպեսզի կարողանա երկար ոտքերի պատճառով գետնից կտրվածությունը հաղթահարել և անհրաժեշտ բուսական կեր հայթհայթել։ Կենդանիների մոտ խիստ զարգացած է և էական դեր է խաղում բնազդը։ Հիացմունք է պատճառում այն հաղորդումը, որ, ասենք, դառները հոտի մեջ ճանաչում են մայրական ձայնը, ստինքը, անգամ կաթի համը։ Ըստ Կեսարացու՝ այլ կերպ անհնարին է պատկերացնել, որովհետև իր տեսակի մեջ կատարյալ պետք է լինի այն ամենը, ինչը աստծո արարչագործության արդյունք է։

Բազմախորհուրդ բնության հրաշալիքների բացահայտմամբ ունկնդրին գրավելը Կեսարացուն հետաքրքրող խնդրի կողմերից է, բայց ոչ հիմնականը։ Նման դեպքերում, թվում է, Բարսեղ Կեսարացուն հետաքրքրում է՝ բնության բացահայտմամբ աստվածասիրության սերմանումը և կյանքից վերցված տպավորիչ օրինակներով քրիստոնեական ճշմարիտ հավատի հավաստումը։ Նրա մոտ կարդում ենք. «Եւ այսպիսի տամ քեզ խրատ, զի խորագիտութիւն խեցգետնոյն առ ի հնարս հաճոյից և գործոց արդարութեան առցես, և մի առ ի մեղանչել ընկերին. քանզի խեցգետնոյ նման է, որ նենգութեամբ մերձենայցէ առ մերձաւորսն, և ընդ միամիտ ընկերին նենգաւ և մանկաւ գնայցէ, և ընդ չար եղբօրն ուրախ լինիցի ոտնահարութեամբ»[20]։ Հեղինակը պատվիրում է առհասարակ հեռու մնալ այն ամենից, ինչը չարիք կարող է ստեղծել մարդկանց համար, ինչը թեկուզ աննշան չափով մոտեցնում է անաշխատ կյանքին, «զի լաւ է աղքատութիւն, որ սակաւիկ ինչ ունիցի արդարութեամբ, քան զամենայն մեծութիւնս և զփափկութիւնս՝ զոր մեղօք ոք և անօրէնութեամբ ունիցի»[21]։

---

20 Նույն տեղում, էջ 144։
21 Նույն տեղում։

Այլ առիթով նկատել ենք, որ «Վեցաւրեայ» ճառերում Բարսեղ Կեսարացուն զբաղեցնողը հիմնականում հոգևոր խնդիր է և այլ կերպ IV դարում, այն էլ եկեղեցական ծառայությունների պայմաններում, պատկերացնել անհնարին է։ Որքան էլ խնդիրը որոշ է ու մեկին, այդուամենայնիվ, հեղինակը համեմատության կարգով երբեմն կատարում է առանձին շեղումներ, որոնք ուշադրության են արժանի թե ժամանակի սոցիալ-քաղաքական իրավիճակը կռահելու և թե իր իսկ աշխարհայացքը գնահատելու առումով։ Այս իմաստով հետաքրքիր վկայություն է այն զուգահեռը, որ Բարսեղ Կեսարացին անցկացնում է միմյանցով կերակրվելու ֆիզիկական տվյալներ ունեցող ձկների ու սոցիալական տարբեր խավի մարդկանց միջև. «Եւ որպէս երևի մեզ, ի մարդիկ ըստ նմին օրինակի գործ գործին ըստ կամաց մերոց, զի որ տնանկն է ի մէնջ՝ հարստին կայ ի ծառայութիւն»[22]։ Ինչպես այլ պարագաներում, այստեղ նույնպես Կեսարացին որոշակի տարբերակում է սոցիալական երկու խավերի՝ իրենց տնտեսական փոխհարաբերությամբ հանդերձ։

Հարստահարման գոյություն ունեցող կոնկրետ ձևերի բացահայտման իմաստով կարևոր է վկայակոչված հատվածի շարունակությունը. «...մինն առնու ինչ որ ոչ իւր իցէ՝ յաղքատոյ անտի, և առնէ յաւելուած ի վերայ մթերից իւրոց, և դարձեալ մեւսն ևս ըստ նորին նմանութեան՝ որ քան զնա հարստագոյն իցէն՝ գայ հասանէ բռնաբար ի վերայ նորա, և հանէ զառ և զաւարն՝ որ յայլոց յափշտակեալ է. և անդ է տեսանել չար քան ըղչարս, և ագահ քան զագահս, որ զմիմեամբք ելեալ խաղայցեն»[23]։

Բարսեղ Կեսարացին տալիս է ոչ միայն սոցիալական տարբեր խավերի տնտեսական-իրավական փոխհարաբերությունը, այլև միևնույն հարստահարող վերնախավի՝ յուրայինների նկատմամբ ունեցած թշնամական վերաբերմունքը, կենաց և մահվան կռիվը այլոց աշխատանքի արդյունքի համար։ Հիշյալ անցքերի ժամանակակից ու ականատես Բարսեղ Կեսարացու դատավճիռը, հասկանալի է, «վերջին դատաստանից» այն կողմ չի անցնում։

Կեսարացին երբեմն քննության առարկա է դարձնում առանձին հոգեբանական խնդիրներ և անում ուսանելի հետևություններ։ Նա գտնում է, որ հաճախ խաբուսիկ ու ապակողմնորոշող է մարդու արտաքինը, ուստի և չի կարելի մարդկանց մասին դատել, ելնելով սոսկ արտաքին տվյալներից։ Քանզի խոհեմ, պատկառազդու և միայն բարին հիշեցնող արտաքինի տակ երբեմն թաքնված է լինում նողկալի ներքինը։ Ծովային «պողիպոդեսս» կոչված կենդանին կարող է ընդունել պատահած խարակի գույնը. «այսպես են և մարդիկ, որ թագուցանեն զնենգութիւն, զոր ունին, բարի կերպարանօք՝ զոր ցուցանեն, և խաբեն շրջեն զմիտս այլոց իւրեանց յեղյեղուկ խորհրդովքն»[24]։ Նա, ավելի կոնկրետացնելով խնդիրը, գտնում է, որ հարափոխ է մարդկային խառնվածքը և երբեք չի մնում միևնույն խորհրդին կամ պայմանավորվածությանը։ Մարդիկ սրբի մոտ սուրբ են ձևանում, չարագործի մոտ՝ հաղորդակից չարիքին և առհասարակ ընդունակ են ցանկացած կերպարանքն ընդունել։ Անիրավությունը, վնասակար խորամանկությունը այն աստիճան տարածված են ու ար-

22 Նույն տեղում, էջ 143։
23 Նույն տեղում։
24 Նույն տեղում, էջ 144—145։

մատավորված, որ նույնիսկ անհնարին է զգուշանալ ու ապրել մեկուսի, «զի իբրև հանդերձ զգեցեալ ունին զբարեկամութիւն ի վերայ խորհրդոց չարեաց՝ որ կան ի սիրտս նոցայ»[25]։

Բարսեղ Կեսարացու անշահախնդիր նպատակն է իր ունկնդիրներին ուսուցանել բնության ոչ միայն բուսա-կենդանական աշխարհի առարկայական տակավին անհայտ ու չբացահայտված կողմերը, այլև խորանալ մարդկային փոխհարաբերությունների ոլորտը, ժամանակի սոցիալ-քաղաքական կացութաձևի էության մեջ այնքանով, որքանով դրանց տնօրինողը աստծո արարած մարդն է։ Նա բացառապես ուսուցողական, աշխարհի ճանաչման նպատակ է հետապնդում այդօրինակ հաղորդումներում, քանզի հոգևոր ծառայություն նախընտրած անձը առավել ևս պետք է անբիծ ու անաղարտ լինի կյանքում, զերծ աշխարհիկ վայելքների աղտեղություններից, որպեսզի ավելի միաձույլ ու հոգեհարազատ լինի միակ աստծուն։ Թվում է, սա է Բարսեղ Կեսարացու վարդապետության ներքին տրամաբանությունն ու գործնական ակնկալությունը։ Այլապես ինչպե՞ս բացատրել մարդկային արատների թվարկում-դատափետմանը հաջորդող նրա խորհուրդը. «Փախիցուք այսուհետև յամենայն կեղծաւոր խորամանկութեանց և յամենայն կերպարանաւոր նենգաւորութեանց, և հաստատեալ կացցուք ի ստոյգ ճշմարտութեան և յանպաճոյճ միամտութեան։ Խորամանկութիւն օձից բարք են ...»[26]։

Բարսեղ Կեսարացու խորհուրդ-բացատրություններում, առաջին հայացքից անհարիր թվացող համեմատություններում միշտ էլ առկա է մի ներքին պատճառաբանվածություն, հոգեբանական էական խնդիր։ Նրա բոլոր դատողություններում հաստատապես խրախուսվում է այն միտքը, որ մարդը որպես բանական արարած անհամեմատ բարձր է կանգնած շրջապատի ամեն մի գոյից։ Բայց, դրանով հանդերձ, ինչ-որ մի տեղ, ասենք կենսապահպանման կամ աշխատասիրության խնդրում համր կենդանիներն անգամ ավելի շրջահայաց ու բարետես են, քան բանականությամբ և օրենքների իմացությամբ օժտված շատ մարդիկ[27]։ Նրանց իրենց հանգստի համար ծովեր են փոխում, «իսկ մեր զի՞ գործեսցուք, զի կեանքս մեր միշտ դատարկացեալ ի բարեաց գտանին, և դատարկութիւն սկիզբն է չարեաց»[28]։

Մարդու մեջ մարդկայինը վեր հանելու, աշխատասիրություն արմատավորելու նպատակով նա մատնացույց է անում ոչինչ համարվող մրջյունի բացառիկ ջանասիրությունը («Եւ նմանեսցուք գոնէ մրջեանն...»[29]), վկայակոչում միմյանց օգնելու գեղեցիկ հատկություն ունեցող թռչունների, որոնք անհամեմատ բարի են ու ընկերասեր, քան այն մարդատյացները, «որ փակեն զդուրս ընդդէմ օտարաց, և ոչ կամին ընդունել ընդ յարկաւ զաղգակիցս իւրեանց ի ժամանակ ձմերայնոյ, գոնէ գիշերի իմիք տակաւ»[30]։ Կենդանական կենցաղի վերոբերյալ հակադրություն-համեմատությունները, անշուշտ, բացառապես

25 Նույն տեղում, էջ 145։
26 Նույն տեղում։
27 Նույն տեղում, էջ 149։
26 Նույն տեղում։
29 Նույն տեղում, էջ 187։
30 Նույն տեղում, էջ 168։

ուսուցողական նպատակ են հետապնդում՝ կապված մարդու և մարդկային հետ[31]։ Բարսեղ Կեսարացին տեսնելով շրջապատի մարդկանց անընկերասիրությունը, շահամոլությունը, անաշխատ կյանք վարելը, բարոյական անկումն ու այլ արատներ ցավում է հոգեպես։ Բայց միաժամանակ դատափետում, խարազանում է մարդկանց նույնիսկ այն դեպքում երբ կարիքը նրանց ստիպում է խոնարհվել, հնազանդվել որովայնին և վերջինիս ստիպմունքով «անկցին ի պատուէ՝ նմանել անասնոց»[32]։ Հենց այս վերջին փաստն էլ ցույց է տալիս, որ մարդը իր բոլոր կողմերով գտնվում է Կեսարացու տեսադաշտում, որի անաղարտության ու դարձի համար ուսումնասիրողը դիմում է զորեղ միջոցների՝ ընդհուպ փառաբանելով կենդանական բնազդը և դատափետելով արատավոր բանականությունը։

Մարդկային միակ ու սուրբ զգացումին հավատարիմ մնալու իր միտքը Կեսարացին պաշտպանում է տատրակի այսպես կոչված կենցաղի վերապատմամբ, որի մասին ամենուր ասում են թե «օտար ամուսնութիւն ոչ խնդրէ, ոչ ի կեանս իւրոյ վարուժանին և ոչ ի մահու, այլ նովին յիշատակաւ անձկաբեկ կեայ և մեռանի, և ոչ խառնակի յայլ օտար ամուսնութիւն»[33]։

Բարսեղ Կեսարացու նմանօրինակ դատողությունները անուղղակի ճանապարհով արտացոլում են ժամանակի իրականությունը և, անշուշտ, հեղինակի վերաբերմունքը վերջինիս նկատմամբ։ Ծուլության, մարդատյացության, ամուսնական անհավատարմության գոյության պայմաններում միայն կարող են դատափետվել դրանց արատավոր հետևանքները։ Կեսարացին առավել ևս ցավում է այն բանի համար, որ աստծո արարած կատարյալ մարդը դեռևս արատավոր բարքերի է հետևում և որ նույն մարդը որոշ առումով սովորելու շատ բան ունի թեկուզ, ասենք, տատրակից, դայլայլող սոխակից, սարյակից և անգամ ոտնատակ գնացող մրջյունից։

Բարսեղ Կեսարացին «Վեցաւրեայ» ճառերում էական տեղ է հատկացնում ժամանակի մարդու ու մարդկային փոխհարաբերությունների այլևայլ կողմերի բացահայտմանը։ Այլ հարց է, թե նա պատկերավորման ինչ միջոցների է դիմում, բայց միակ նպատակն է աստծո արարած մարդ էակին, լինի թագավոր թե սովորական մահկանացու, տեսնել վեհ ու կատարյալ, անհամեմատ բարձր կանգնած ամեն մի գոյից, ուստի և խարազանում է ամեն մի թերություն ու չի հանդուրժում մարդկային արատն անգամ։ Բարսեղ Կեսարացին կատարյալ հիացմունքով է դրվատում մեղուների միաբանությունը. «քանզի ի միասին կեան, և ի միասին գնան, միանգամայն ժողովին, և միանգամայն թռչին, և միագործ ճեպեալ վաստակեն համօրէն։ Եւ մեծ քան զամենայն այս է, զի ընդ իշխանաւ և ընդ առաջնորդաւ են. և ոչ մատչին ի գործ, և ոչ իշխեն երթալ ծաղկաքաղ ի մարգս, մինչև տեսցեն զթռչուն թագաւորն իւրեանց սկսեալ 'ի գործ վաստակոյն իւրեանց»[34]։ Անհավանական է կարծել, թե վկայակոչված հատվածով հեղինակը կամենում է պարզապես մեղուների այսպես կոչված միաբան աշխատասիրությունը փառաբանել։ Այստեղ վերջինիս նկատմամբ ունեցած հիացմունքից առաջ Բարսեղ Կեսարացին իրականում արտահայտում

31 Հմմտ. Ս. Նազարեթյան, Ակնարկ ս. Բարսեղի «Վեցօրէից» վրա (տե՛ս «Պատկերաս», հանդէս կիսամսեայ, Կ. Պոլիս, 1893, № 19, էջ 443—444)։

32 «Վեցաւրեայ», էջ 184։

33 Նույն տեղում, էջ 170։

34 Նույն տեղում, էջ 164։

է IV դարում գործող տնտեսական-իրավական այլևայլ կողմեր. ա) դժգոհությունը՝ ժամանակի մարդկանց անաշխատասեր բարքերից, բ) ժողովրդի և թագավորի միաբանության խիստ անհրաժեշտությունը, դ) թագավորի արժանի ու կարող անձ լինելու անչափ կարևորությունը։

Բարսեղ Կեսարացին տառացիորեն դժգոհում է ժամանակի թագավորներից և թագավորի ընտրության ընդունված կարգից։ Ահա թե ինչու է վեր հանվում մեղուների փութաջան աշխատանքը, մայր մեղուների էական դերը, որոնք «ոչ որպէս առ մեզս (=մեզ մոտ եղած թագավորների պես.— Կ. Մ.) անարժան գործք գործին, զի առանց քննելոյ և ընտրելոյ կացուցանեմք մերով ընտրութեամբ մեզ իշխանօրէն»[35]։ Ավելին, նա քննադատում և մերժում է ժառանգաբար՝ հորից-ցորդի թագավոր ճանաչելու ընդունված կարգը և առավել ևս այն երևույթը, որ նրանք շատ հաճախ պաշտամունք են դարձնում սնոտի ցանկությունը և, ի վերջո, կործանվում նույն կրքից[36]։

«Վեցաւրեայի» նման մի գործ չէր կարող չունենալ իր բացահայտ ազդեցությունը դավանակիցների հոգևոր մշակույթի վրա։ Այս իմաստով բանասիրական ուշագրավ երևույթ է «Վեցաւրեայ» ճառերի նկատելի հետքերը բյուզանդական, հայոց և վրաց մատենագրության մեջ։ Ինչ վերաբերում է մասնավորապես հայոց մատենագրության հետ ունեցած առնչությանը (հինգերորդ դարի թարգմանությամբ), ապա անհնարին է պատկերացնել Կողբացու, Խորենացու, Բուզանդի, Շիրակացու, Շնորհալու և այլոց մեջ հասած գործերի սպառիչ և վերջնական քննություն, առանց Բարսեղ Կեսարացու մատենագրական ողջ ժառանգության և մասնավորապես «Վեցաւրեայ» ճառերի քննության և, անկասկած, թողած ազդեցության բացահայտման։

«ШЕСТОДНЕВ» ВАСИЛИЯ КЕСАРИЙСКОГО

К. М. МУРАДЯН

Резюме

В «Шестодневе» известного византийского ученого-монаха Василия Кесарийского отражены многие стороны жизни и исторической действительности Византии. Труд, фактически, посвящен не столько освещению библейской легенды мироздания, сколько обзору и анализу многочисленных явлений природы, существующих представлений о них, человеческим взаимоотношениям, социальной стороне, нравам и обычаям IV века и т. д. К тому же, древнеармянский перевод названного трактата, данными которого руководствуется автор статьи, занимает исключительное место среди других переводов.

35 Նույն տեղում։
36 Նույն տեղում։